# ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2026Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

# 2026թ. վարչական ծախսերի նախահաշվի և կապիտալ ներդրումների ծրագրի կազմման հիմքում ընկած հիմնական մոտեցումներ

ՀՀ կենտրոնական բանկը (այսուհետ՝ ԿԲ) վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների (այսուհետ՝ Բյուջե) պլանավորումն իրականացնում է ԿԲ-ում գործող՝ միջազգային ստանդարտների և կենտրոնական բանկերի լավագույն փորձի հիման վրա պատրաստված ԿԲ Խորհրդի կողմից հաստատված բյուջետավորման քաղաքականության համաձայն՝ հիմք ընդունելով «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով ԿԲ-ին վերապահված գործառույթները, ԿԲ-ի ռազմավարությունը և տեսլականը:

Վարչական ծախսերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը կազմվում են ՖՀՄՍ համաձայն՝ հաշվեգրման սկզբունքից ելնելով՝ հիմնվելով հետևյալ մոտեցումների վրա.

- Ռազմավարական մտածողություն. ԿԲ-ն ռազմավարական առաջնահերթությունները ձևավորելիս առաջնորդվել է չորս գլխավոր ուղղություններով՝ ֆինանսական համակարգ, մակրոտնտեսական քաղաքականություն, ԿԲ կարողություններ և հաղորդակցում.

- Նախագծային մոտեցում. Առանցքային նախագծերի սահմանմամբ՝ նվազեցվում է բյուջետավորման կարճաժամկետ կենտրոնացումը և հնարավորություն է տրվում ռեսուրսները բաշխել՝ ապահովելով դրանց արդյունքայնությունը:

Այս լույսի ներքո ԿԲ 2026թ. Բյուջեում նախատեսվել են ռազմավարությունից բխող մի շարք նախագծեր, որոնց հիմնական նպատակն է գործող ենթակառուցվածքների արդիականացումը և զարգացումը, ինչպես նաև ԿԲ հիմնական խնդիրներից բխող մի շարք գործընթացների ավտոմատացումը:

Մասնավորապես՝ 2026թ. Բյուջեում ներառվել է «Էլեկտրոնային վճարային համակարգի (այսուհետ՝ ԷՎՀ) արդիականացում» նոր ծրագիրը, որի իրագործումը նախատեսվում է փուլային՝ ծրագրի ներքո առանձնացված նախագծերի իրականացման միջոցով: Ծրագրի նպատակն է վերազինել Կենտրոնական բանկի վճարային համակարգը, ինչի արդյունքում գործող համակարգը կփոխարինվի առավել ժամանակակից, ֆունկցիոնալ, արագագործ, անվտանգ և ներառական համակարգով: Նոր համակարգը, մատուցելով բարձրորակ ծառայություններ ֆինանսական շուկային, կխթանի ոլորտում նորարարությունը: Ծրագրի հիմնական բաղադրիչներն են՝ մասնակիցների հաշիվների վարման և վերջնահաշվարկի իրականացման նոր համակարգի ներդրումը (Real Time Gross Settlement system), ֆինանսական հաղորդագրությունների փոխանցման նոր համակարգի ներդրումը և ՀՀ-ում ISO20022 միջազգային ստանդարտին համապատասխան ֆինանսական հաղորդագրությունների ներդրումը: Հարկ է նշել, որ ծրագրի փուլային իրագործման ճանապարհին 2026թ.-ին նախատեսվել է ստեղծել ԷՎՀ-ի արդիականացման ծրագրի տեխնիկական հիմքը. մասնավորապես նախատեսվում է նախագծել, մշակել և ներդնել ֆինանսական հաղորդագրությունների փոխանցման ժամանակակից համակարգ:

Հաշվի առնելով ՖՀՄՍ համապատասխան ԿԲ հաշվետվողականության ներքո ակտիվի սկզբնական ճանաչման համար գործող հաշվեգրման սկզբունքը և, որպես արդյունք, 2025թ. կապիտալ ներդրումների ծրագրով նախատեսված որոշ նախագծերի ավարտականացման մասով առկա ռիսկերը՝ 2026թ. Բյուջեում կրկին ներառվել են ստորև նշված նախագծերը.

- ԿԲ-ի սերվերային սենյակի հիմնանորոգում՝ TIER III ստանդարտին համապատասխան.
- ԿԲ-ի վարչական շենքի ճարտարապետական կոնցեպտուալ փոփոխության ծրագիր.
- ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների համապատասխանության ռիսկերի գնահատման և մոնիտորինգի իրականացման գործընթացների ավտոմատացում:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

| *Հազ. դրամ* | *Ծնթ* | *2024թ. Կատարողական* | *2025թ. Նախահաշիվ* | *2026թ. Նախահաշիվ* | *2026թ. նախահաշվի տարբերությունը 2025թ. նախահաշվի նկատմամբ* |
|---|---|---|---|---|---|
| **Ապարատի պահպանման ծախսեր** | **1** | **8,507,250** | **11,162,451** | **11,908,029** | **7%** |
| *Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ* | 1.1 | 7,654,028 | 9,753,438 | 10,514,160 | 8% |
| *Աշխատակիցների սոցիալական ապահովություն* | 1.2 | 368,279 | 572,144 | 639,631 | 12% |
| *Անձնակազմի գործուղում, ուսուցում և վերապատրաստում* | 1.3 | 425,135 | 734,373 | 682,741 | -7% |
| *Ներկայացուցչական ծախսեր* | 1.4 | 30,173 | 54,000 | 50,580 | -6% |
| *Ծառայողական փոխադրամիջոցների շահագործում* | 1.5 | 29,635 | 48,496 | 20,917 | -57% |
| **Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր** | **2** | **25,079** | **53,080** | **47,903** | **-10%** |
| **Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսեր** | **3** | **59,236** | **89,161** | **65,491** | **-27%** |
| **Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսեր** | **4** | **17,728** | **23,826** | **23,868** | **0.2%** |
| **Չնախատեսված ծախսեր** | | **-** | **20,000** | **15,311** | **-23%** |
| **Ընդամենը վարչական ծախսեր** | | **8,609,293** | **11,348,518** | **12,060,602** | **6%** |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

| *Հազ. Դրամ* | **Ծնթ** | ***2024թ. Կատարողական*** | ***2025թ. Նախահաշիվ*** | ***2026թ. Նախահաշիվ*** | ***2026թ. նախահաշվի փարբերությունը 2025թ. նախահաշվի նկատմամբ*** |
|---|---|---|---|---|---|
| Կենտրոնական բանկի խնդիրների հետ ուղղակիորեն առնչվող իրավաբանական անձանց կապիտալում ներդրումներ | 5 | 754,908 | 5,500,000 | 5,000,000 | -9% |
| Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կատարված ներդրումներ | 6 | 1,395,491 | 2,510,271 | 3,113,586 | 24% |
| **Ընդամենը կապիտալ ներդրումների ծրագիր** | | **2,150,399** | **8,010,271** | **8,113,586** | **1%** |

## 2026թ. վարչական ծախսերի նախահաշվին և կապիտալ ներդրումների ծրագրին կից ծանոթագրություններ

### ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վարչական ծախսերն ընդգրկում են ապարատի պահպանման, լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման, տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման և ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսեր, ինչպես նաև չնախատեսված ծախսեր: 2026թ. վարչական ծախսերի նախահաշիվը կազմում է 12,060,602 հազ. դրամ, ինչը ենթադրում է 6% աճ նախորդ տարվա նախահաշվի նկատմամբ: Հարկ է նշել, որ ԿԲ-ն, առաջնորդվելով ՀՀ ԿԲ բյուջետավորման քաղաքականությամբ և պահպանելով ծախսերի օպտիմալացմանն ուղղված իր կողմից որդեգրած սկզբունքները, մշակել է Վարչական ծախսերի բյուջետավորման նոր ձեռնարկ, ինչի արդյունքում 2026թ. վարչական ծախսերի գերակշիռ հոդվածների մասով արձանագրվել է նվազում:

### 1. Ապարատի պահպանման ծախսեր

Ապարատի պահպանման ծախսերն ընդգրկում են ԿԲ-ի անձնակազմի աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, սոցիալական ապահովության, անձնակազմի գործուղման, ուսուցման և վերապատրաստման, ներկայացուցչական, ինչպես նաև ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսերը: 2026թ. ապարատի պահպանման ծախսերի նախահաշիվը կազմում է 11,908,029 հազ. դրամ, ինչը ենթադրում է 7% աճ նախորդ տարվա նկատմամբ:

### 1.1 Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ

Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հաշվարկը կատարվում է՝ ելնելով «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի պահանջներից:

2026թ. համար «Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածը պլանավորելիս ԿԲ-ը նախատեսել է նախորդ տարվա համեմատ ընդհանուր ֆոնդի աճ 8%-ով: Նշենք, որ 2026թ. համար առևտրային բանկերը կանխատեսել են 1,429 հազ. դրամ միջին ամսական աշխատավարձ, և ԿԲ-ը, հետամուտ լինելով իր որդեգրած քաղաքականությանը՝ միտված չեզոքացնելու ԿԲ-ի և բանկային համակարգի միջին աշխատավարձերի միջև բացասական ճեղքվածքը, 2026թ. համար ԿԲ-ի միջին ամսական աշխատավարձի պլանային ցուցանիշ է նախատեսել 1,020 հազ. դրամի չափով, որը գերազանցում է 2025թ. պլանային ցուցանիշը 3%-ով (2025թ.՝ 991 հազ. դրամ): Գնահատվում է, որ 2026թ.-ին ԿԲ-ի և բանկային համակարգի միջին նախահաշվային աշխատավարձերի միջև ճեղքվածքը կկազմի 29%: Միաժամանակ 2026թ.-ին աշխատակիցների կանխատեսվող թվաքանակը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 4.8%-ով՝ կազմելով 859 աշխատակից (2025թ.՝ 820 աշխատակից): Աշխատակիցների թվաքանակի աճը պայմանավորված է ԿԲ-ում ժամանակի հրամայական հանդիսացող նոր գործառույթների ստեղծմամբ (մասնավորապես՝ «Կրիպտոակտիվների մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պայմանավորված), ինչպես նաև կրիտիկական գործառույթների ընդլայնմամբ:

### 1.2 Աշխատակիցների սոցիալական ապահովություն

Աշխատակիցների սոցիալական ապահովության ծախսերն առավելապես նախատեսված են ԿԲ-ի ներքին կանոնակարգերով սահմանված ԿԲ-ի անձնակազմի սոցիալական փաթեթի, այդ թվում՝ առողջության ապահովագրության ծախսերն իրականացնելու, ինչպես նաև ՀՀ Աշխատանքային օրենսգրքով նախատեսված նպաստների տրամադրման համար: Սույն հոդվածի գծով 2026թ. նախահաշիվը կազմում է 639,631 հազ. դրամ, ինչը ենթադրում է 12% աճ նախորդ տարվա նկատմամբ: Աճն արտացոլում է աշխատատեղերի քանակի առաջարկվող ավելացումը և ԿԲ-ի աշխատակիցների՝ վերջին տարիներին ուժգնացած հոսունությունը:

### 1.3 Անձնակազմի գործուղում, ուսուցում և վերապատրաստում

Առաջնորդվելով «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմնական նպատակների՝ գների կայունության և ֆինանսական կայունության ապահովման և ԿԲ-ի խնդիրների իրականացման գործընթացում յուրաքանչյուր աշխատակցի արդյունավետ գործունեությունն ապահովելու խնդրով՝ ԿԲ-ը կարևորում է սովորելու մշակույթի ձևավորումը, աշխատակիցների շարունակական ուսուցումն ու զարգացումը, վերլուծական և ստեղծագործական ունակությունների, հետազոտական կարողությունների ձևավորումն ու զարգացումը, քաղաքականության մշակման և վերլուծական ունակությունների զարգացումը, ֆինանսական ոլորտում կրթված մասնագետներ ունենալը և մարտահրավերներին դիմակայելու պատրաստվածությունը:
2026թ. այս հոդվածի գծով նախահաշիվը կազմում է 682,741 հազ. դրամ՝ 2025թ.–ի նկատմամբ նվազելով 7%-ով:
Այս հոդվածի ներքո պլանավորվող ծախսերն ուղղվում են.

- ԿԲ-ի անձնակազմի մասնագիտական գիտելիքների խորացմանն ու աշխատանքային խնդիրներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման և մասնագիտական որակավորման դասընթացներին ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս առաջատար կառույցներում.
- միջազգային մասնագիտական որակավորումների ստացմանը.
- փորձի փոխանակման նպատակով ուսուցողական այցերին.
- միջազգային կառույցներում ԿԲ-ի ներկայացուցչությունն ապահովելու համար անհրաժեշտ հանդիպումներին, համաժողովներին ԿԲ-ի աշխատակիցների մասնակցությանը և աշխատանքային խնդիրների իրականացման նպատակով ՀՀ տարածքում գործուղումներին.
- ռազմավարական նպատակների իրականացման համար նախագծային գործուղումներին:

### 1.4 Ներկայացուցչական ծախսեր

2026թ. ներկայացուցչական ծախսեր հոդվածի գծով նախահաշիվը կազմում է 50,580 հազ. դրամ՝ 2025թ.–ի նկատմամբ նվազելով 6%-ով: Սույն հոդվածի ներքո պլանավորվող ծախսերն ուղղվում են միջազգային և տեղական կառույցների, կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց հետ համագործակցության հաստատմանը և (կամ) պահպանմանը:

### 1.5 Ծառայողական փոխադրամիջոցների շահագործում

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով ԿԲ-ին վերապահված գործառույթների իրականացման համար, ինչպես նաև իր ենթակայության ներքո գտնվող տարածքային միավորների բնականոն գործունեության և դրանց միջև մշտական կապի ապահովման նպատակով ԿԲ-ը շահագործում է ավտոպարկ, որի գերակշիռ մասը կազմում են հերթապահ մեքենաներ, ավտոբուսներ և միկրոավտոբուսներ: 2026թ.-ին ԿԲ-ը նախատեսում է շահագործել 11 ավտոմեքենա (2025թ.՝ 29 ավտոմեքենա), որոնցում ներառված են թվով 4 էլեկտրական շարժիչով մեքենաներ: Ավտոմեքենաների շահագործման ծախսերը հաշվարկելիս հիմք են ընդունվել վառելիքի կանխատեսվող միջին շուկայական գները, ԿԲ-ի կողմից ավտոմեքենաների տեխսպասարկման համար կնքված պայմանագրերը, նախորդ տարիների փաստացի ծախսերը: 2026թ. «Ծառայողական փոխադրամիջոցների շահագործում» հոդվածի գծով նախահաշիվը կազմում է 20,917 հազ. դրամ՝ 2025թ. նախահաշվի նկատմամբ նվազելով 57%-ով՝ պայմանավորված ծառայողական ավտոմեքենաների քանակների վերանայման գործընթացով:

## 2. Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր

Այս հոդվածի ներքո պլանավորվել են ամսագրերի և թերթերի բաժանորդագրության, մասնագիտական գրականության ձեռքբերման, լրատվական գործակալությունների նյութերի ձեռքբերման և այլ նմանատիպ ծախսերը: ԿԲ-ի կողմից մասնագիտական գրականության ձեռքբերումը և ֆինանսական ոլորտում մասնագիտացված և բարձր վարկանիշ ունեցող պարբերականների և էլեկտրոնային գրադարանների բաժանորդագրությունը նպատակ ունի խթանելու ԿԲ-ի աշխատակիցների մասնագիտական գիտելիքների զարգացումը: 2026թ. համար այս հոդվածը պլանավորվել է հիմնականում՝ ըստ կորպորատիվ և ինստիտուցիոնալ փաթեթների՝ հաշվի առնելով միջազգային պարբերականների կողմից կիրառվող հրապարակումների բովանդակության հասանելիության տարածման սահմանափակումները:

Արդյունքում այս հոդվածի գծով 2026թ. նախահաշիվը կազմում է 47,903 հազ. դրամ՝ 10%-ով նվազելով նախորդ տարվա նկատմամբ: Այս հոդվածի ներքո պլանավորվող ծախսերը ներառում են.

- Գրականության ձեռքբերում՝ 6,711 հազ. դրամ.
- Ամսագրերի, պարբերականների և թերթերի բաժանորդագրություն՝ 32,552 հազ. դրամ.
- Լրատվական տեղեկատվության ձեռքբերում՝ 8,640 հազ. դրամ:

## 3. Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսեր

Սույն հոդվածի ներքո արտացոլվում են ԿԲ-ի վարչական շենքի և ԿԲ-ին պատկանող մյուս տարածքային կառույցների բնականոն աշխատանքային վիճակի ապահովման համար անհրաժեշտ ԿԲ-ի ներքին կանոնակարգերով սահմանված տնտեսական նյութերի ու արագամաշ առարկաների սպառման հետ կապված ծախսերը: 2026թ. այս հոդվածի գծով նախահաշիվը կազմում է 65,491 հազ. դրամ: Այս ուղղությամբ ծախսերը նվազել են 27%-ով նախորդ տարվա նախահաշվի նկատմամբ:

## 4. Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսեր

Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերը ներառում են հեռախոսակապի հետ կապված ծախսերը: Պլանավորման ժամանակ հաշվի են առնվում հեռահաղորդակցման կապի համապատասխան միջոցների օգտագործման կարիքները, նախորդ տարիների փորձը, գործող պայմանագրերը և սակագները: 2026թ. այս հոդվածի գծով նախահաշիվը կազմում է 23,868 հազ. դրամ՝ մնալով գրեթե անփոփոխ նախորդ տարվա նախահաշվի նկատմամբ:

## ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

### 5. Կապիտալ ներդրումներ ԿԲ խնդիրների հետ ուղղակիորեն առնչվող իրավաբանական անձանց կապիտալում

2026թ.-ին ԿԲ խնդիրների հետ ուղղակիորեն առնչվող իրավաբանական անձանց կապիտալում ներդրումների ներքո նախատեսվում է 5,000,000 հազ. դրամի չափով ներդրում դուստր ընկերության կանոնադրական կապիտալում՝ պայմանագրով պլանավորված ներդրումների կատարումն ապահովելու և նախանշված արդյունքին հասնելու նպատակով:

### 6. Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերմանն ուղղված ներդրումների ծրագիրը 2026թ. կազմում է 3,113,586 հազ. դրամ:

Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում 2026թ. նախատեսվող ներդրումների բացվածքը ներկայացված է ստորև.

| *Հազ. դրամ* | | ***2024թ.*** ***Կատարողական*** | ***2025թ.*** ***Նախահաշիվ*** | ***2026թ.*** ***Նախահաշիվ*** | ***2026թ./2025թ.*** ***Փոփ.,%*** |
|---|---|---|---|---|---|
| **Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ, որից՝** | | **1,395,491** | **2,510,271** | **3,113,586** | **24%** |
| Շենքերի և շինությունների կառուցում, ձեռքբերում և կապիտալ վերանորոգում | 6.1 | 120,389 | 788,262 | 775,462 | -2% |
| Համակարգչային տեխնիկայի, ծրագրերի և բանկի գործունեության առնչվող այլ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | 6.2 | 1,239,842 | 1,692,009 | 2,338,124 | 38% |
| Տրանսպորտային միջոցների ձեռքբերում | 6.3 | 35,260 | 30,000 | - | -100% |

### 6.1 Շենքերի և շինությունների կառուցում, ձեռքբերում և կապիտալ վերանորոգում

Սույն հոդվածի ներքո նախատեսվում է իրականացնել ԿԲ-ի գործունեության անընդհատությունն ապահովող մի շարք միջոցառումներ:

ԿԲ գլխավոր մասնաշենքում շահագործվող սերվերային տարածքները և վերջիններիս աշխատանքն ապահովող հովացման, էլեկտրասնուցման և հրդեհաշիջման համակարգերը շահագործվում են 2010թ-ից: Այս համակարգերի մի մասը խափանված է, մյուս մասը՝ բարոյապես մաշված, ուստի չեն կարող ապահովել կրիտիկական համակարգերի անընդհատությունը: Սույն կապիտալ վերանորոգման աշխատանքների համար 2025թ. Բյուջեում նախատեսված 468,262 հազ. դրամի չափով կապիտալ ներդրումներն ամբողջությամբ տեղափոխվել են 2026թ.:

2026թ.-ին նախատեսվել են նաև որոշ աշխատանքներ ԿԲ-ին պատկանող շինությունների կապիտալ վերանորոգման գծով 307,200 հազ. դրամի չափով, որի ներքո մասնավորապես նախատեսվում է հետևյալը.

- ԿԲ-ի վարչական շենքի ճարտարապետական կոնցեպտուալ փոփոխության ծրագրի մասով կապիտալ ներդրումներ՝ 80,000 հազ. դրամ.
- Էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացմանը միտված՝ արևային էներգիայի օգտագործմամբ համապատասխան կայանների տեղադրման գծով ներդրումներ՝ 63,000 հազ. դրամ.
- Այս հոդվածի ներքո պլանավորված կապիտալ ներդրումների մնացած մասն ուղղվելու է ԿԲ օդորակման, էլեկտրասնուցման համակարգերի արդիականացմանը/փոխարինմանը, ինչպես նաև ԿԲ-ի գործունեության անընդհատության ապահովմանն ուղղված կապիտալ բնույթի այլ աշխատանքներին:

### 6.2 Համակարգչային տեխնիկայի, ծրագրերի և բանկի գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում

Համակարգչային տեխնիկայի, ծրագրային ապահովման, գրասենյակային գույքի, կապի միջոցների և այլ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերմանն ուղղված ներդրումների ծրագիրը կազմում է 2,338,124 հազ. դրամ: Նախատեսված կապիտալ ներդրումները ներկայացված են ստորև.

- **«ԷՎՀ արդիականացում» ծրագիր**, որի համար 2026թ.-ին նախատեսվել է 1,032,405 հազ. դրամ: Ծրագրի շրջանակներում 2026թ.-ին նախատեսվում է ստեղծել ԷՎՀ-ի արդիականացման ծրագրի տեխնիկական հիմքը. նախատեսվում է նախագծել, մշակել և ներդնել ֆինանսական հաղորդագրությունների փոխանցման ժամանակակից համակարգ:
- **Սերվերներ,** որոնց համար նախատեսվել է 384,740 հազ. դրամ՝ ուղղված ԿԲ սերվերային համակարգի հզորությունների ավելացմանը:
- **ՓԼ/ԱՖ և պատժամիջոցների համապատասխանության ռիսկերի գնահատման և մոնիտորինգի իրականացման գործընթացների ավտոմատացման նախագիծ**, որի համար նախատեսվել է 282,455 հազ. դրամ: Նախագծի իրականացման մասով աշխատանքներն արդեն մեկնարկել են: Ենթադրվում է, որ նախագծի կատարողականը կգրանցվի 2026թ-ին:

- **Սերվերային համակարգերի վիրտուալիզացիայի համակարգի արտոնագրեր**, որոնց ձեռքբերման նպատակով նախատեսվել է 167,216 հազ. դրամ:
- **Ռիսկերի և պատահարների գրանցման, գնահատման, մոնիտորինգի և հաշվետվողականության համակարգ,** որի համար նախատեսվել է 95,000 հազ. դրամ:
- **Բիզնես գործընթացների կառավարման համակարգի ներդրման նախագիծ**, որը հաստատվել է 2022թ.-ին ԿԲ ռազմավարական նախաձեռնությունների շրջանակում և հետագայում վերանվանվել է՝ որպես «Տեղեկատվական կառավարման համակարգ»: Նախագծի աշխատանքների մեկնարկը տրված է, և կանխատեսվում է, որ 2025թ.-ի տարեվերջին Տեղեկատվական կառավարման համակարգը կհանձնվի արտադրական շահագործման: 2026թ.-ին սույն նախագծի մասով նախատեսվել է 85,266 հազ. դրամ բաժանորդագրության տեսակի արտոնագրերի ձեռքբերման նպատակով:
- **Գրասենյակային գույք,** որի գծով գնահատվում է, որ կապիտալ ներդրումները կկազմեն 27,548 հազ. դրամ:
- **Անվտանգության ապահովման համար անհրաժեշտ հիմնական միջոցներ** - Գնահատվել է, որ սույն կապիտալ ներդրումները կկազմեն 15,830 հազ. դրամ:
- **Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում այլ ներդրումներ** - Կապիտալ ներդրումների մնացած՝ շուրջ 11%-ը, նախատեսվում է ուղղել SS, տեղեկատվական անվտանգության և ԿԲ այլ ենթակառուցվածքների տարրերի փոխարինմանը, զարգացմանը և արդիականացմանը:

Կապիտալ ներդրումների ծրագրում նախատեսված ծրագրային ապահովումների մասով հարկ է նշել, որ կախված ձեռքբերվող արտոնագրի բնույթից և տեսակից՝ ՖՀՄՍ համաձայն և ԿԲ-ի ներքին կանոնակարգերով սահմանված որոշ դեպքերում ձեռքբերումները կարող են իրականացվել ԿԲ ծախսերի հաշվին կապիտալ ներդրումների փոխարեն:

### 6.3 Տրանսպորտային միջոցների ձեռքբերում

2026թ. տրասպորտային միջոցների ձեռքբերում չի նախատեսվել: